ԱԼ. ՇՆԵՈՒՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ (1918-1920 ԹԹ.)*

Վանիկ Վիրաբյան

Բանալի բառեր՝ զնդապետ Ալ. Շնեուր, հետախույզ, հետախուզական ծառայություն, Սարդարապատ, հերոսամարտ, Զոդ-Բասարգեչար, գեներալ Դանիել Բեկ-Փիրումյան, հայկական զորք, Հայաստանի Հանրապետություն, պետական անվտանգություն, պատմափաստ, կապիտան Տիգրան Դեվոյանց, պորուչիկ Հ. Խան-Կոտուրսկի, կապիտան Վահագն Մուրադյանց, օդային և լճային նավատորմ, օդուժ:

Շնեուր հետախույզն ու մարտիկը առանձնահատուկ տեղ է զբաղեցնում հայկական հետախուզության կոհորտայում. նա այդ հետախուզական ծառայության ստեղծման մասնակիցը և ականատեսն է եղել:

Քննարկվող հարցի և մասնավորապես հանիրավի մոռացված Առաջին հանրապետության լավագույն հետախույզներից մեկի՝ Սարդարապատի հերոս Ալ. Կ. Շնեուրի դիտարժան կերպարի ամբողջացման տեսանկյունից միանգամայն արժեքավոր է Ա. Բախչինյանի և ԱՄՆ-ից Կ. Մաթևոսյանի մի փոքրիկ, սակայն կարևոր հրապարակումը Առաջին հանրապետության 100-ամյա տարեդարձի առթիվ [1], որում ներկայացված է Սարդարապատյան Շնեուրը, սակայն Ալ. Շնեուրի կենսագրության հետախուզական էջին բոլորովին անդրադարձ չի կատարվել, ինչը մենք որոշակի չափով ամբողջացրել ենք արխիվներից և այլ հազվագյուտ հրապարակումներից, տարբեր վավերագրերից քաղված, կցկտուր նյութերում առկա վկայակոչումներով: Դրանք էլ հենց հնարավորություն են տալիս մասամբ, ոչ լիովին լույս սփռել Ալ. Շնեուրի գործունեության՝ հայ ընթերցողին անհայտ, սակայն շատ հետաքրքիր մի շարք պատմափաստերի վրա՝ էլ ավելի ամբողջացնելով նրա գունեղ դիմապատկերը:

Բոլոր դարաշրջաններում էլ ամեն մի պետության, և տվյալ դեպքում հետախուզական և հակահետախուզական ծառայությունների համար կադրային հիմնախնդիրները համարվել են առաջնային, ինչից կախված էր բոլոր տեսակի անվտանգային ծրագրերի մշակումը և իրականացումը, երկրի պաշտպանությունը արտաքին թշամիներից և վտանգներից: Ի սկզբանե Ալեքսանդր Շնեուրը փորձառու զինվորական, փոխգնդապետ Մ. Զինկևիչի, Վլադիմիր Պրիտոմանովի, ինչպես նաև կապիտաններ Նիկոլայ Ալեքսանդրի Շումովի, Միխայիլ Ռադիոնի Մեդվեդևի և հայկական դիվիզիայի շտաբի զորամասերի մի շարք սպաների հետ միասին ընդգրկվեց Գլխավոր շտաբի կազմում, և նրանց անունները հայտնվեցին պատերազմական և այլ արտակարգ իրավիճակների հետ կապված տեղեկագրերում, ինչի մասին բազմանշանակորեն վկայում են տարաբնույթ արխիվային փաստաթղթերը և մասնավորապես՝ ՀՀ Ազգային Արխիվի մի շարք ֆոնդերի վավերագրերը [2]:

Գլխավոր շտաբում հետախուզական բաժանմունքի պետը, նրա ստեղծման առաջին օրերից սկսած, բազմահմուտ փոխգնդապետ Ալեքսանդր Կոնստանտինի Շնեուրն էր. նա 1919 թ. ապրիլից մինչև 1919 թ. սեպտեմբեր հանդիսացել է Գլխավոր սպայակույտի հետախուզական և հակահետախուզական բաժնի վարիչը՝ իր տրամադրության տակ ունենալով սակավ թվով աշխատակիցներ: Հետագա տարիներին ՀՀ հետախուզական բաժանմունքը գլխավորեցին մի շարք սպաներ, որոնց անունները

---

* Հոդվածն ընդունվել է 20.04.21:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.թ., դոցենտ Ա. Վարդանյանը: 27.04.21:

մեկընդմիշտ մնացին այդ ծառայության կենսագրության ծալքերում: 1919 թ. սեպտեմբերից սկսած մինչև 1920 թ. ապրիլը որպես հետախուզական բաժնի պետ աշխատել է հայտնի կապիտան Վահագն Գալուստի Մուրադյանը, ով անկուսակցական էր: 1920 թ. ապրիլից մինչև հունիսի վերջը հետախուզական բաժանմունքի գործունեությունը ղեկավարում էր Տիգրան Թադևոսի Դեվոյանցը [3], որը քաղաքական համոզմունքներով Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության անդամ էր (վերջինս, իր իսկ վկայությամբ, Դրոյի դասընկերն է եղել [4]), 1920 թ. հուլիսից մինչև Հայաստանի խորհրդայնացումը ընկած ժամանակահատվածում (դեկտեմբերի 2-ը) հետախուզական բաժինը գլխավորել է Միքայել Նիկիտայի Դոդոխյանը:

Փոխգնդապետ Ալեքսանդր Կոնստանտինի Շնեուրը (ազգանունը գործածական է եղել Chneour ձևով, իսկ թերթերում ու գրքերում 1917 թ. և հետո տարածված են եղել Schneur, Schneour, Shneur ձևերը, և անգամ կիրառական է եղել Schneour տարբերակը) եղել է Հայաստանի Հանրապետության հատուկ ծառայությունների, և մասնավորապես՝ հետախուզության վառ դեմքերից, Գլխավոր շտաբի Հայկական հետևակային դիվիզիայի շտաբին կից հանձնարարությունների գծով սպա, որը ծագումով էլզաս-լոթարինգցի էր, գերմանացի [5]: Շնեուրների տոհմը Ռուսաստանում հայտնվել է XIX դարից սկսած, նրանք մեծամասամբ եղել են հայտնի իրավաբաններ և զինվորականներ: Ա. Կ. Շնեուրի նախնիներից մեկը՝ Գլխավոր շտաբի գնդապետ Նիկոլայ Յակովլևիչ Շնեուրը (1848-1894 թթ), թուրքական Արդահան քաղաք-ամրոցի գրավման համար պարգևատրվել է Գեորգիևյան խաչով: Նիկոլայ Յակովլևիչ Շնեուրի քեռին՝ Վլադիմիր Կոնստանտինի Շնեուրը, որը եղել է 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմի մասնակից, այնուհետև մասնակցել 1917 թ. փետրվարյան-հոկտեմբերյան փոթորկալից իրադարձություններին, ծանոթ է եղել Լ. Դ. Տրոցկու (Լ. Դ. Բրոնշտեյն) հետ, մեղադրվել գերմանացիների հետ լրտեսական կապերի մեջ և անգամ որոշակի հանգամանքներում համագործակցության մեջ մտնելով մեծամասնական ռեժիմի հետ՝ նրանց կողմից 1918 թ. գործուղվել է Ֆրանսիա՝ հատուկ հետախուզական առաջադրանքով և այլն, ի վերջո դատապարտվել և մահացել համակենտրոնացման ճամբարում՝ Սոլովեցկիում՝ Արխանգելսկի մոտ: Վլադիմիր Կոնստանտինի Շնեուրը ունեցել է երկու քույր և երկու եղբայր, որոնցից մեկը՝ Նիկոլայ Կոնստանտինովիչ Շնեուրն է եղել (մահացել է Ճապոնիայում 1934 թ.), իսկ մյուս եղբայրը ՀՀ Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի գնդապետ Ալեքսանդր Կոնստանտինի Շնեուրն է[6]:

Ա. Կ. Շնեուրը ծնվել է 1884 թ. օգոստոսի 20-ին Ս. Պետերբուրգում՝ ռուս ուղղափառ ընտանիքում: Ալեքսանդր Շնեուրը երիտասարդ տարիներին ճամփորդել է Գերմանիայում ու Շվեյցարիայում: Ալ. Կ. Շնեուրը 1904 թ. ավարտել է Պետերբուրգի Գուրևիչի գիմնազիայի ութամյա դասընթացը: Այդ ընթացքում նա ավարտել է նաև Ս. Պետերբուրգի համալսարանի բնագիտական ֆակուլտետը: Այն ավարտելուց հետո մտել է հեծյալ հրետանային զորակազմի մեջ՝ 1906 թ. Միխայլովյան հրետանային դպրոցը և 1916 թ. Նորին Մեծության կայսերական Նիկոլայան ռազմական ակադեմիան, որից հետո Կիևում ավարտել է դիտորդ օդաչուների դպրոցը [7]: Այնուհետև զինվորական ծառայության է մտել իբրև հեծելազորային հրետանու մարտկոցի սպա: 1909 թվականին նրան շնորհվել է տեղակալի, իսկ 1913-ին՝ փոխգլխապետի (շտաբս-կապիտան) աստիճանը: Ակտիվորեն մասնակցել է Առաջին աշխարհամարտին, և պարգևատրվել 5 մարտական շքանշաններով: Առաջին աշխարհամարտի ընթացքում Շնեուրը պարգևատրվում է մի շարք շքանշաններով իր զինվորական նշանակալից ծառայությունների համար (Ս. Ստանիսլավի 2-րդ և 3-րդ աստիճանների, Ս. Աննայի 4-րդ, 3-րդ եւ 2-րդ աստիճանների, Ս. Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշաններով): Առաջին աշխարհամարտի նախօրյակին եղել է 5-րդ հեծյալ-հրետանային դիվիզիոնի շտաբս-կապիտան, իսկ այնուհետև՝ 9-րդ հեծյալ-հրետանային մարտկոցի սպա: 1915 թ. երկամյա դասընթաց է անցել Կիևի օդանավորդության դպրոցում՝ ստանալով օդա-

չուի վկայական, իսկ 1916-1917 թթ. ուսանել է Ս. Պետերբուրգի Նիկոլայևյան սպայակույտի ակադեմիայում [8]: 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո նա հայտնվել է Ռուսաստանի հարավում, այնուհետև ծառայության անցել Կովկասում: 1917 թ. Արժանացել է գլխապետի (կապիտան) աստիճանին:

1917 թ. մեծամասնական հեղափոխության ժամանակ Ալ. Շնեուրը ռուսական 19-րդ զորաբաժնի (կորպուսի) սպայակույտի պետն էր Լեհաստանում: Հակամեծամասնական «Սպիտակ» Կամավորական բանակի կողմը անցնելով՝ Ալ. Շնեուրը 1917 թ. դեկտեմբերի 6-ին ուղարկվել է Նովոռոսիյսկ և ապա Բաքու՝ անգլիացիների հետ բանակցելու զենք-զինամթերքի առաքման մասին, ինչպես և կապ հաստատելու գեներալ Նիկոլայ Բարաթովի (1865-1932 թթ.) ռուսական պարսկական ռազմական արշավախմբի հետ, համալրվում է Կամավորական բանակի կազմում, այնուհետև ստանձնում է 1-ին բանակային կորպուսի շտաբի պետի պաշտոնը Էրզրումում, նաև՝ Էրզրումի բերդի շտաբի պետի պարտականությունները[9]:

1918 թ. սկիզբներին, իր իսկ վկայությամբ, Շնեուրը միացել էր հայկական բանակին («միայն առաքելութեամբ, զօրավար Բարատովի իրաւասութեան շրջանը»)[10], ստանձնելով Կարին (Էրզրում) քաղաքի առաջին գումարտակի սպայակույտի պետի պաշտոնը՝ գնդապետ Մորելի հրամանատարության ներքո, և ապա՝ Կարինի ամրոցի սպայակոյտի ղեկավարությունը: Քաղաքի անկումից հետո (1918 թ. մարտ) նշանակվել է Երկրորդ գումարտակի սպայակույտի պետ»[11]: Դիտարժան է եղել Շնեուրի գործունեությունը Կարսի շրջանում, հատկապես՝ Բեռնա գյուղի կռվի ժամանակ (1918 թ. ապրիլի 18-20), որի համար ռուս զինվորականին 1918 թ. ապրիլին շնորհվել է փոխգնդապետի աստիճան:

Դեռ 1918 թ. մայիսյան հայրենական հերոսական ոգեկոչման օրերին հայկական զորքերի Սարդարապատի խմբի շտաբի պետն էր և այդ հերոսամարտի մասին հրատարակել է բարձրարժեք հուշեր [12]: Հայկական դիվիզիայի գծով 1918 թ. օգոստոսի 21-ի (N 12) հրամանում զորքերի հրամանատար Մ. Միլիկյանը իրեն վստահված դիվիզիայի շտաբի հանձնարարությունների գծով շտաբային սպաների հաստիքային պաշտոնում է նշանակում Գլխավոր շտաբի փոխգնդապետներ Ալ. Կ. Շնեուրին և Իվան [Հովհաննես] Դավիդի Վեքիլյանին (Վեքիլով Իվան Դավիդի [13], օգոստոսի 15-ի դրությամբ)՝ միաժամանակ դիվիզիայի շտաբի ավագ համհարզների հաստիքային պաշտոնում նշանակելով պոդպորուչիկ Սհարոնովին, պորուչիկ Մեդվեդևին, պրապորշչիկ Սարգիսյանին, շտաբս-կապիտան Շումովին և պոդպորուչիկ Դվերնիցկուն[14]:

Հայաստանի Հանրապետության զինվորական գերատեսչության գծով զինվորական աստիճանների մասին 1918 թ. հոկտեմբերի 11-ի հրամանագրով (N 21) Զինվորական նախարար Հախվերդյանը իրենց զբաղեցրած պաշտոններում հաստատում է մի շարք սպաների, այդ թվում և Շնեուրին: Այսպես՝ 2-րդ հատուկ հայկական հետևակային բրիգադի շտաբի նախկին պետ, փոխգնդապետ Շնեուրը հաստատվում է որպես Հայկական հետևակային դիվիզիայի շտաբի հանձնարարությունների գծով սպա [15]: Անշուշտ, հետաքրքիր է նշել, որ Ալեքսանդր Շնեուրը՝ որպես բարձրաստիճան կադրային սպա, բազմիցս կատարել է ամենադժվարին հանձնարարությունները և, գտնվելով զինվորական և հետախուզական ծառայությունների վերին էշելոնում, հաճախակի փոխարինել է Գլխավոր շտաբի պետ Զինկևիչին զբաղեցրած պաշտոնում՝ վերջինիս բազմակի գործուղումների ժամանակ, որի մասին արխիվներում կան համապատասխան վկայություններ[16]:

1918 թ. մայիսյան հաղթանակներից և Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո Ալ. Շնեուրը ավելի քան մի տարի շարունակում է ծառայել հայոց բանակում, Ռազմական նախարար Հովհաննես Հախվերդյանի հրամանով նշանակվել է հետևակային զորաբաժնի սպայակույտի՝ հանձնարարությունների գծով սպայի պաշտոնում: Մասնակցել է 1918 թ. դեկտեմբերյան վրաց-հայկական պատերազմին և Նոր

Բայազետ-Բասարգեչարի գավառի մահմեդականների խռովությունը ճնշելուն ուղղված «Զոդի» գործողությանը: Իսկ արդեն Զինվորական նախարարի՝ 1918 թ. դեկտեմբերի 5-ի (N 42) Հայկական դիվիզիայի գծով հրամանագրում (N 58/137) Գլխավոր շտաբի փոխգնդապետ, դիվիզիայի շտաբի հանձնարարությունների գծով սպա Ալ. Շնեուրը և նրա հետ միասին 1-ին հետևակային բրիգադի հրամանատար գեներալ-մայոր Փիրումյանը ստանում են հատուկ նշանակում՝ համարվելով մշտական գործուղման մեջ՝ սկսած դեկտեմբերի 3-ից՝ առանց իրավունքի զբաղեցնելու թափուր մնացած պաշտոնը և առանց պահպանելու ռոճիկը, որը նրանք պետք է ստանային իրենց ծառայության նոր վայրում: Դա Զոդի հանրահայտ փայլուն օպերացիայի նախապատրաստական փուլն էր, որի իրագործման ժամանակ ճնշվեց հակապետական և հակահայկական մահմեդական խռովությունը Բասարգեչարի շրջանում: 1918 թ. դեկտեմբերի 31-ից սկսած՝ Ալ. Շնեուրը արդեն առանձին Ղարաբաղյան բրիգադի պետն էր[17]: Նրա վաստակը 1919 թ. սկզբի Զոդի օպերացիայում մեծ էր, որին նա մասնակցեց որպես գեներալ-մայոր Դանիել Բեկ-Փիրումյանի կողմից գլխավորած ջոկատի շտաբի պետ: Զոդի օպերացիան նաև հայկական բանակի և հետախուզական ծառայության փոխհամագործակցության ուսանելի օրինակներից է: Ուշագրավ է, որ այդ ջոկատի գործողությունները Զոդ գյուղի շրջանում բարձր գնահատականի արժանացավ նույնիսկ անգլիական ծառայության գնդապետ Կ. Թեմպերլեյի կողմից: Թաթարական գյուղերը մարտով գրավելու ժամանակ զորաջոկատի գործողությունները կարգապահության և սպաների ու զինվորների խիզախության առումով այնքան գերազանց էին, որ գնդապետ Թեմպերլեյը, օպերացիայի ավարտից հետո ժամանելով Երևան, իրեն պարտավորված համարեց բարեխոսել Հայաստանի կառավարության առաջ ջոկատի տոկուն և կարգապահ գործողությունների մասին: Նախարարների խորհուրդը, ապրիլի 24-ին լսելով գնդապետ Թեմպերլեյի կարծիքը, որոշում ընդունեց շնորհակալություն հայտնել գեներալ-մայոր Փիրումյանին և բոլոր սպաներին ու զինվորներին՝ Զոդի շրջանում մարտական փայլուն գործողությունների համար: Զինվորական նախարար գեներալ-մայոր Արարատյանը իրեն երջանիկ էր համարում, ի դեմս երիտասարդ Հայկական բանակի, շնորհակալություն հայտնել գեներալ-մայոր Փիրումյանին և նրա շտաբի պետ Շնեուրին՝ որպես փառավոր մարտական փորձ ունեցող սպաների, որոնք ստեղծեցին և ոգեշնչեցին Զոդի ջոկատը և նրա կողմից իրականացված հրաշալի ու անթերի ռազմական օպերացիան, որն էլ առաջին անգամ արժանի գնահատական ստացավ անգամ անգլիական բանակի ներկայացուցչի կողմից: Որոշման մեջ Զինվորական նախարարը կարգադրեց հատկապես աչքի ընկած սպաներին ներկայացնել զինվորական կոչման հերթական աստիճանի[18]: Այս օպերացիայի ավարտից հետո արդեն Զինվորական գերատեսչության գծով 1919 թ. ապրիլի 28-ի հրամանով (N 64) առանձին Ղարաբաղյան բրիգադի պետ Ալ. Շնեուրը նշանակվում է Գլխավոր շտաբի բաժնի պետ[19]:

1919 թ. սեպտեմբերին նշանակվել է Հայաստանի Հանրապետության Զինվորական սպայակույտի ժամանակավոր պետ՝ փոխարինելով դեր-զորավար /գեներալ մայոր/ Դոլուխանյանին [20] :

Շնեուրը այդ ժամանակի ամենատեղեկացված սպաներից էր, այս առումով չափազանց ուշագրավ է Գլխավոր շտաբի գնդապետ Ալ. Շնեուրի՝ 1919 թ. օգոստոսի կեսի մի զեկուցագիր-հաղորդագրություն՝ ուղղված Փարիզում գտնվող հայկական զինվորական ներկայացուցիչ գեներալ Գ. Ղորղանյանին՝ կապված փախստականների և էրզրումի շրջանում իշխող ռազմաքաղաքական իրավիճակի որոշ հարցերի հետ: Ի լրացում իր՝ ավելի վաղ ուղարկված մեկ այլ զեկուցագրի՝ Շնեուրը նշում է, որ, իր ունեցած տեղեկատվության համաձայն, ֆրանսիական հրամանատարության առաջարկությամբ խնդիր է դրվել կազմել փախստականների վերադարձի պլան, ինչի կապակցությամբ ստեղծված հանձնաժողովի կազմում ընդգրկվել է նաև ինքը՝ նպատակ ունե-

նալով գբաղեցնելու Վանի, Մուշի, Էրզրումի գավառները, ինչպես նաև Ալաշկերտի և Խնուսի հովիտները, ինչից էլ ելնելով իր կողմից խնդիր է դրվում վերականգնել Մակվի ճանապարհը, որով ինչպես և Էրզրումի նեղ երկաթուղագծով առավել հարմար կլինի տեղափոխել փախստականներին և բեռները: Շեուրը տեղեկացնում էր, որ սույնին վերաբերող պլանները և սխեմաները ներկայացվել են գեներալ Թովմաս Նազարբեկովին (Նազարբեկյան): Սակայն այս տեղեկատվության մեջ մեզ համար առավել կարևորն այն է, որ հետախուզական ծառայության ղեկավարներից մեկը՝ Շեուրը, խիստ կարևորելով ժողովրդագրական առումով Արևմտահայաստանը հայերով վերաբնակեցման քաղաքականությունը, պարզապես խնդիր էր դնում վերացնել Էրզրումի կառավարությունը, այնտեղից դուրս բերել թուրքական զորքերը և այդ տարածքը գրավել ամերիկյան զորքերի միջոցով՝ ավելացնելով, սակայն, որ լավ կլինի միաժամանակ կոստանդնուպոլսյան-կիլիկյան և Բուլղարիայի հայերից կազմավորել զորքեր[21]:

Ինչպես Զինկևիչի պարագայում, որին նա հաճախ փոխարինում էր, Շեուրին ևս հաճախակի փոխարինում էին Գլխավոր շտաբի իր գործընկերները: 1919 թ. սեպտեմբերի 9-ին Զինվորական նախարար Արարատյանի հրամանով ծառայողական գործուղումից վերադարձած Շեուրը ձեռնամուխ է[22] լինում իր պարտականությունների կատարմանը՝ որպես Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար, միաժամանակ այդ հրամանագրով կապիտաններ Շումովին և Մեղվեդևին կարգադրվում էր անցնել իրենց անմիջական պարտականությունների կատարմանը:

Ալեքսանդր Շեուրը ամենուր էր, որտեղ դժվար էր և անհանգիստ: 1919 թ. հոկտեմբերի 25-ին Զինվորական նախարարին հասցեագրված զեկուցագրում (N 02167) Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար գնդապետ Շեուրը տեղեկացնում էր, որ նույն օրը ինքը մեկնել է գործուղման Կարս և Կաղզվան՝ ժամանակավորապես Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատարի պարտականությունները դնելով նույն շտաբի բաժնի պետ Վ. Մուրադյանի վրա [23]:

1919 թ. սեպտեմբերին գեներալ-մայոր Արսենի Սերգեյի Դոլուխանյանի (Ա. Դոլուխանովի) փոխարեն ՀՀ զինվորական շտաբի պետ է նշանակվում արդեն գնդապետ Ա. Կ. Շեուրը[24], որին հետագայում փոխարինում է գեներալ-մայոր Բ. Վ. Բաղդասարովը, օգոստոսի 30-ից Զինվորական նախարարության գլխավոր համբարակապետ է դառնում գեներալ-մայոր Ա. Բեյ-Մամիկոնյանը [25]: Գնդապետ Շեուրի հանձնարարական-երաշխավորագրի հիման վրա՝ հետախուզական ծառայություն է մտել Գրիգորի Իսահակի Խաչատրյանը:

Հայկական պետության անվտանգության կարևոր բաղկացուցիչներ հանդիսացող հետախուզական մարմինների ձևավորման խնդրով ի սկզբանե շահագրգիռ սպաների մեջ Շեուրը յուրահատուկ տեղ է գբաղեցնում:

Սակայն առկա փաստաթղթերի մանրազնին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կազմակերպական-ֆինանսական խնդիրներն այդ բնագավառում հեշտությամբ չէին լուծվում, երբեմն էլ արհեստական խոչընդոտներ էին հարուցվում, որոնք դժվարացնում էին հայկական հետախուզական ծառայությունների աշխատանքները, հաճախ վերջիններիս գործնականում կանգնեցնում փակուղու առաջ: Դա բավականաչափ հստակ է երևում 1919 թ. մայիսի 2-ի Գլխավոր շտաբի պետին հասցեագրված (N P07) զեկուցագրից, որում հետախուզական բաժանմունքի պետի պաշտոնակատար Հովհան Խան-Կոտուրսկին (Արտեմի Նիկիտայի Հովհաննեսով) նշում էր, որ հետախուզական բաժնի գործունեության ընդարձակման և հարևան երկրներում նոր կետերի բացման հետ կապված՝ անհրաժեշտ է հոգ տանել այն մասին, որ Հայաստանի սահմաններից դուրս գտնվող հետախուզության գործակալները ինչ-որ աջակցություն ունենային իրենց երկրի դիվանագիտական ներկայացուցիչների կողմից: Փաստաթղթում ասվում էր, որ հետախուզության սպան «ծախողման» դեպքում պաշտոնապես չի օգտվում պաշտպանության իրավունքից և իր սեփական ռիսկի հաշվին է աշխատում:

Այդ կապակցությամբ շեշտվում էր, որ այդ ամենի հետ մեկտեղ հետախույզի աշխատանքում էական աջակցություն (անշուշտ, ոչ պաշտոնապես) կարող են ցույց տալ դիվանագիտական ներկայացուցչությունները (միսիաները), ինչը և գոյություն ունի բոլոր երկրներում, և ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ հետախուզության գլուխ միշտ էլ կանգնած են լինում դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարները: Զեկուցագրում միաժամանակ ափսոսանք կար, որ հայկական դիվանագիտական ներկայացուցչությունները հետախուզության գործակալների՝ իրենց դիմելու դեպքում միանգամից վախենում են և մերժում վերջիններիս՝ բացատրելով, որ տագնապում են հնարավոր «դիվանագիտական բարդացումներից», իսկ եթե երբեմն էլ որոշ օգնություն են ցուցաբերում, ապա ոչ այնքան հմուտ ձևով և հետախուզության գործակալին դնում են ամենառիսկոտ դրության մեջ (Խ. Կոտուրսկին - ընդգծումը մերն է՝ Վ. Վ.): Խան-Կոտուրսկին վերը նշված զեկուցագրում նաև գտնում էր, որ անհրաժեշտ է հարաբերության մեջ մտնել Արտաքին Գործերի նախարարության հետ և խնդրել, որ վերջինս կարգադրություններ անի բոլոր դիվանագիտական ներկայացուցիչներին ինչպես Անդրկովկասում, այնպես էլ Թուրքիայի շրջանակներում, և համապատասխան ձևով նշել, որ աջակցությունը հետախուզության գործակալներին նրանց աշխատանքում ուղղակի ներկայացուցչությունների պարտականությունն է: Զեկուցագրում նաև նշվում էր, որ այդ աջակցությունը պետք է գլխավորապես կայանա փաստաթղթերի փաթեթների ուղարկման և տարբեր շրջաններ ուղևորությունների ժամանակ անհրաժեշտ փաստաթղթերի ստացման համար աջակցության ցուցաբերման մեջ: Զեկուցագրի վերջնամասում նշվում էր, որ ներկայացուցչության աշխատանքներից բացի՝ պետք է բոլոր միջոցները ձեռնարկվեն, որ իրենց անզգույշ գործողություններով չձախողեն հետախուզության գործակալներին: Զեկուցագրում նաև ասվում էր, որ հրահանգների մանրամասները, թե ինչում պետք է արտահայտվի ներկայացուցչությունների օգնությունը, տեղում կարող են տրվել հետախուզության սպայի կողմից[26]: Այդ նույն զեկուցագրի վրա Խան-Կոտուրսկին նաև մակագրել է, որ ինքը միջնորդում է ներկայացուցչությունների առաջ՝ օգնություն ցուցաբերել: Դիմումագիրը հասցեագրված էր Ալ. Շնեուրին, որին և հանձնարարվեց հարցի պրակտիկ կողմի մշակումը [27]: Եվ արդեն 1919 թ. մայիսի 21-ին Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի պետի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականությունները կատարող փոխգնդապետ Ալ. Շնեուրը Զինվորական նախարարին ուղղված դիմումագրում խնդրում էր վերջինիս միջնորդությունը Արտաքին Գործերի նախարարության միջոցով աջակցել հետախուզության աշխատակիցներին[28]: Այս փաստաթղթի տակ ևս կար Հ. Խան-Կոտուրսկու ստորագրությունը: Այդ նույն օրը Հայաստանի Զինվորական նախարար գեներալ-մայոր Արարատյանը (Արարատյան Քրիստափոր Գերասիմի) [29] գաղտնի գրությամբ դիմում է Արտաքին Գործերի նախարարին՝ կցելով նաև Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի պետի զեկուցագիրը՝ կապված Արտաքին Գործերի նախարարության աստիճանավորների և Զինվորական նախարարության գործողությունների ուղղորդման հետ: Դիմումագրում Զինվորական նախարարը խնդրում էր կարգադրություն անել ամենաինտենսիվ օգնություն ցուցաբերելու հետախուզության աշխատակիցներին, որոնք դիմում էին Արտաքին Գործերի նախարարության ներկայացուցիչներին Հայաստանի սահմաններից դուրս: Գեներալ-մայոր Արարատյանը նշում էր, որ մանրամասն տվյալները, թե ինչում պետք է արտահայտվի հետախույզներին ցուցաբերվող աջակցությունը և գործողությունների ընդհանրությունը, անհրաժեշտ է պարզաբանել տեղում՝ հետախուզության բարձր աստիճանավորների բանակցություններում դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների կամ անձնակազմի հետ[30]:

Այսպես՝ 1919 թ. մայիսի 17-ին Զինկևիչը ծառայողական գործուղումով Թիֆլիս և Բաթումի է մեկնում՝ կապված Անդրկովկասյան վեհաժողովի աշխատանքների հետ և այլն: Թիֆլիս էր մեկնել նաև Հայաստանի զորքերի հրամանատար գեներալ-լեյտե-

նանտ Թ. Նազարբեկյանը: Այդ իսկ կապակցությամբ Զինկևիչը իրեն փոխարինող է թողնում Գլխավոր շտաբի փոխգնդապետ Շնեուրին [31]: Մայիսի 23-ի գրությամբ (N 94) փոխգնդապետ Շնեուրը զինվորական գերատեսչության ղեկավարին՝ Զինվորական նախարարին, տեղեկացնում էր, որ ինքը ձեռնամուխ է եղել իր պարտականությունների կատարմանը, այն է՝ Զինկևիչի բացակայության պայմաններում ժամանակավորապես ստանձնել Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի և զորքերի հրամանատարի շտաբի պետի պաշտոնները (Տեղեկանք: Հիմք Զինվորական նախարարի N 183 հրամանը և N 0578 զեկուցագիրը)[32]:

Սակայն իրական կյանքն ավելի բարդ էր և գործընթացներն էլ ոչ միանշանակ: Պրակտիկան ցույց տվեց, որ Արտաքին Գործերի նախարարության և Հայաստանի Հանրապետության հետախուզական ծառայության փոխհարաբերությունները ամենևին էլ այնքան հարթ չընթացան, ինչպես կարելի էր սպասել, այլ երբեմն էլ ընթացան փոխադարձ պահանջատիրության և տեղ-տեղ էլ՝ անհարկի քաշքշուկների մթնոլորտում: 1919 թ. հունիսի 18-ին Արտաքին Գործերի նախարարին ուղղված գրությամբ (N 3833) Գլխավոր շտաբի պետ Ալ. Շնեուրը, ի պատասխան Զինվորական նախարարի հասցեին 1919 թ. հունիսի 18-ին արտգործնախարարության կողմից հղված դիմումագրում արծարծված ստուգիչ բնույթի հարցերի (N 2210), խնդրում էր շտապ հաղորդել և առաջիկայում էլ տեղյակ պահել, թե հետախուզական բաժանմունքի կողմից ներկայացված տեղեկություններից որոնք են դուրս եկել ոչ ճիշտ, ինչպես նաև կատարել դիվանագիտական ներկայացուցիչներից ստացված տեղեկատվության փոխանցում[33]:

Եվ այնուհանդերձ հետախուզական աշխատանքները փակուղի են մտնում նաև Կ. Պոլսում, որտեղ Շնեուրի գինակից Տ. Դեվոյանցը հետախուզական խումբ էր ստեղծել: Եվ ինչպես պարզվում է գնդապետ Ա. Շնեուրի՝ կապիտան Տ. Դեվոյանցին ուղարկած հոկտեմբերի 28-ի նամակից, ֆինանսավորումը, որ անընդհատ ուշանում էր, լավագույն դեպքում կատարվել է միայն հոկտեմբեր ամսվա համար, հետևաբար նրան մնում էր մտածել ետ գնալու մասին[34]: Սակայն ինչպես պարզվում է ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովի որոշմամբ ստեղծված Գերագույն դատական ատյանի 1920 թ. ապրիլի 3-ին նիստում կապիտան Վահագն Մուրադյան[g]ի տված ցուցմունքներից, ինքն է առաջարկել Դեվոյանցին ետ կանչել Կ. Պոլսից՝ պատճառաբանությամբ, որ իբր թե իրենք «անոր ստանալիք տեղեկութիւնները» կարող էին ստանալ Ադրբեջանի և Թիֆլիսի իրենց ընկերներից[35], ինչը չէր համապատասխանում իրողությանը, ինչը և ապացուցվում է Կ. Պոլսից Տ. Դեվոյանցի կողմից՝ գեներալ Գ. Ղորղանյանին Փարիզ ուղարկված զեկույցներից[36]: Եվ այդուհանդերձ Վ. Մուրադյանցը վերը նշված դատական ատյանի նիստում պնդեց, որ Դեվոյանցին Կ. Պոլսից ետ կանչելով՝ իրենք նյութական տեսակետից շահում էին, քանզի «Տիգրանը Պոլիս աւելի քան ամսական 33.000 ռուպլի կը ծախսեր, մեր պիւտճէին կէսը գրեթէ»[37], ինչը ակնհայտ չափազանցություն էր: Մուրադյանը կարծում էր, որ «Տիգրան՝ որպէս ռազվեդկայի գործէն լաւ հասկացող մը» մնար Երևանում՝ ասելով, որ, հակառակ իր կարծիքի, Ալ. Շնեուրը, որին պաշտոնի բերումով ենթարկվում էր Դեվոյանցը, պնդել էր Կ. Պոլսում Տ. Դեվոյանցի մնալու հարցը: Ի վերջո, ինչպես պնդում է Վ. Մուրադյանը ՀՅԴ դատական ատյանի նիստում, այն բանից հետո, երբ ինքը հետախուզական բաժանմունքի պետի պաշտոնում փոխարինում է Ալ. Շնեուրին, իր կողմից հրաման է արձակվում Կ. Պոլսից Դեվոյանցին ետ կանչելու մասին [38], ինչն էլ իրագործվում է, և Տ. Դեվոյանցը ետ է գալիս:

Ուշագրավ է նաև մի այլ փաստաթուղթ, որի բովանդակությունը իր մեջ հետախուզական խորհրդավորություն է պարունակում: 1919 թ. նոյեմբերի 13-ին թվագրվող փաստաթղթում նշվում է Գլխավոր շտաբի պետի ժամանակավոր պաշտոնակատար, գնդապետ Շնեուրի՝ նոյեմբերի 4-ի զեկուցագրի (N 02202) մասին, որում վերջինս հաղորդում էր, որ ինքն իրեն թույլատրված երկամյա արձակուրդի ընթացքում մեկնել է

Ռուսաստանի բոլոր քաղաքները և այդ կապակցությամբ հրամայվում է նույն շտաբի հետախուզական բաժնի պետ կապիտան Մուրադյանին ձեռնամուխ լինել Գլխավոր շտաբի պետի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականությունների կատարմանը[39]: Այդուհանդերձ հանրագումարի բերելով և համադրելով առկա փաստերը՝ հանգում ենք այն կարևոր հետևությանը, որ գործնականում 1918 թ. հունվարից մինչև 1919 թ. նոյեմբերի 8-ը գնդապետ Ալ. Շնեուրը եղել և գործել է Հայաստանի Հանրապետության բանակի սպայական կազմում [40]: Սակայն դրանից հետո, հանգամանքների բերումով, որոնք դեռ չեն բացահայտվել, նա հեռանում է Հայաստանից և ծառայության անցնում Դենիկինի բանակում[41]: Ըստ Կայալովի՝ «Շնէուր մնացած է հայկական զօրքերուն հետ մինչեւ Հոկտեմբեր 1919, երբ հայկական կառավարութիւնը որդեգրած է ազգայնացման ծրագիրը»[42]:

Մեկ այլ շատ հետաքրքիր փաստաթղթից տեղեկանում ենք Շնեուրի հետախուզական կենսագրության ոդիսականից դիտարժան մի փաստի մասին. այսպես՝ Գեներալ Պ. Ն. Վրանգելի՝ ռուսական բանակում հետախուզության կազմակերպման մասին 1920 թ. հուլիսի 29-ի խիստ գաղտնի գործակալական տեղեկության մեջ Ռազմաճակատի հատուկ բաժանմունքի օպերատիվ մասի պետ Ռ. Խասկինը հայտնում էր, որ վերջին ժամանակներում Վրաստանում գեներալ Վրանգելի ներկայացուցիչ Դրացենկոյի գլխավորած շտաբին առընթեր նշանակվել է գործակալական մասի նախկին պետ, գնդապետ Ալ. Շնեուրը՝ հանձնարարելով հետախուզությունը Կովկասում և գլխավորապես լեռնական ժողովուրդների մոտ[43]:

Հետաքրքիր է նշել նաև, որ 1920 թ. Ալ. Շնեուրը գեներալ Խալիլովի հետ միասին ուղարկվել է Բաթումի՝ Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքի հետ կապի համար, իսկ արդեն 1920 թ. օգոստոսի 1-ին գործուղվել է Ղրիմ[44] :

Մի շարք փաստեր օգնում են ավելի ամբողջական և գունեղ դարձնելու այս ինքնատիպ և՛ հայկական պետականության, և՛ այն ուժային կառույցները մարմնավորող հետախուզական և հակահետախուզական ծառայությունների կայացման ակունքներում կանգնած հետախույզ-սպայի՝ Ա. Կ. Շնեուրի կերպարը:

Հայաստանում, որտեղ ՀՀ զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանի 1920 թ. հունիսի 26-ի N 1073 շրջաբերական հրամանի հիման վրա, որը բխում էր ՀՀ խորհրդարանի 1919 թ. դեկտեմբերի 26-ի և Նախարարների խորհրդի 1920 թ. մայիսի 30-ի օրենքներից, ոչ ուշ, քան մինչև օգոստոսի 1-ը գործավարությունը և գրագրությունը բոլոր շտաբներում, ռազմական հիմնարկություններում և զորամասերում պետք է կատարվեր հայերեն լեզվով[45], կադրային ներուժին զգալի հարված հասցվեց, քանզի հայ զինվորականության հատկապես բարձրաստիճան խավը ոչ իր մեղքով չէր տիրապետում հայերենին, և դուրս մղվեցին զորքի շարքերից ռուսներ և այլազգիներ, ինչպես նաև՝ Սարդարապատի հերոս փոխգնդապետ Ա. Կ. Շնեուրը և ուրիշներ, ինչը վկայում էր կայացված վճռի ժամանակավրեպ լինելու մասին: Այս և այլ հանգամանքներ վնասեցին բանակաշինական գործընթացներին: Վրաստանի ռազմաքաղաքական գերատեսչությունը ևս համանման խնդիրներ ունեցավ կուսակցական-քաղաքական ղեկավարության հետ, որը զորքի նկատմամբ իրագործվող իր ոչ բանիմաց հսկողությամբ վնասում էր բանակաշինական գործընթացներին, որից բազմիցս բողոքել էր գեներալ Գ. Կվինիտաձեն՝ դժգոհելով քաղաքացիական միջավայրից դուրս եկած ռազմական մինիստրների անկրթությունից և ռազմական գործում ոչ բանիմացությունից, հաճախ էլ տգիտությունից [46]:

Սական հայկական բանակի հայացման՝ 1920 թ. տեղի ունեցած գործընթացները իրենց հետքը թողեցին նաև Ա. Շնեուրի փայլուն կենսագրության վրա, քանի որ 1920 թ. կեսերին ընդունված օրենքի համաձայն՝ նրանք, ովքեր չէին տիրապետում հայերենին, պետք է լքեին բանակի շարքերը: Շատերը, այդ թվում և Շնեուրը, ոչ իրենց մեղքով հայերենին չէին տիրապետում, իսկ Ռ. Տեր-Մինասյանի նախաձեռնությամբ ընդունված

օրենքը թեկուզ և ապագայի հայկական բանակի ազգայինի վերածման առումով տեղին էր, սակայն ժամանակավրեպ էր: Առավել ևս, որ նրանք ցարական բանակի սպաներ էին, որտեղ ուսուցումը ռուսերեն էր: Եվ հետո չէր կարելի Անտանտի երկրների կողմից հրահրվող, այսպես կոչված, հակամեծամասնական տրամադրությունների տակ իրագործել համատարած թշնամանք այն ամենի նկատմամբ, ինչը ռուսական էր, չէ որ այդ նույն ռուսախոս կիսագերմանացի-կիսաֆրանսիացի Ալ. Շնեուրը Սակիլյարիի, Ն. Մորելի և շատերի հետ դարձավ Սարդարապատի հերոսներից մեկը՝ հերոսաբար կռվելով հայկական հողի համար: Համենայն դեպս, 1919 թ. հոկտեմբերին Շնեուրը իր հրաժարականն է տալիս ու Հայաստանի Հանրապետությունից մեկնում արտերկիր: Վերադառնալով Ռուսաստան՝ միանում է Անտոն Դենիկինի «Սպիտակ» զորքերին, որոնք պայքար էին մղում Վ. Լենինի գլխավորած մեծամասնական ուժերի դեմ, որը Գերմանիայի կողմից Ռուսաստան ներդրած լրտես էր: 1919 թ. սեպտեմբերի 1-ից պաշտոնավարել է Ռուսաստանի Հարավի Զինված ուժերի հրամանատարի շտաբում՝ Տագանրոգում[47]:

Ինչպես պարզվում է Տ. Դեվոյանցի կողմից Փարիզ՝ գեներալ Ղորղանյանին ուղարկած 1919 թ. նոյեմբերի 23-ի զեկուցագրից (N 57), Դեվոյանցը 1919 թ. նոյեմբերի 11-ին նամակ է ստանում գնդապետ Ալ. Շնեուրից, որով վերջինս հայտնել էր, որ ինքը վերջնականապես մեկնել է Կամավորական բանակ, որտեղ ծառայում է մինչև 1920 թվականը [48], իսկ այնուհետև նա հայտնվում է տարագրության մեջ՝ համալրելով ռուս սպիտակգվարդիական տարագիրների շարքերը: Այնուհետև որպես կամավոր Ալ. Կ. Շնեուրը՝ ծառայության է անցել ֆրանսիական բանակի կազմում (որպես կամավորական): Հազարավոր ռուս զինվորականների նման մեծամասնականների դեմ մղված պայքարի անհաջողությունից հետո Ա. Դենիկինի Սպիտակ Կամավորական բանակի այլ սպիտակգվարդիական սպաների նման Ալ. Շնեուրը ևս վտարանդի դառնալով, մեկնում է Թուրքիա՝ Գալիպոլիի ճամբար, և ապա՝ Բուլղարիա: Թե՛ Թուրքիայում և թե՛ Բուլղարիայում նա դասավանդում է ռուսական բանակի՝ տակավին նոր կազմակերպվող զորամասերում, ինչպես նաև Բուլղարիայի սպաների ճարտարագիտական դպրոցում՝ որպես դասախոս և սպա-ինժեներ:

Երկու անգամ վիրավորվել է և կոնտուզիա ստացել: Այդ ընթացքում Գալիպոլում (Կ. Պոլիս) և Բուլղարիայում եղել է դասավանդող սպա ռազմական դպրոցում: Որոշակի փոթորկալից իրադարձություններից հետո տարբեր առիթներով եղել է ոչ միայն Բուլղարիայում, այլև Հարավսլավիայում, այդ ժամանակ դեռ ֆրանսիական գաղութ հանդիսացող Թունիսում: 1923-1924 թթ. հանդիսացել է Գլխավոր շտաբի սպաների ընկերության անդամ, որից հետո արդեն Ֆրանսիայում է շարունակել անդամակցել [49]:

Որոշ տվյալներով Շնեուրը Թունիս է անցել 1929 թ., իսկ մեկ այլ տվյալով Թունիսում ապրել է 1934-1946 թթ. [50] աշխատել որպես ֆրանսիական գաղութային վարչության աշխարհագրական բաժանմունքում և քարտեզագրի պաշտոնով աշխատել ճանապարհների ու կամուրջների գործերի բաժանմունքում]: Թունիսում ապրած տարիներին նվիրվել է բնական գիտություններին, հատկապես երկրի թեփուկաթևավորների (lepidopter) ուսումնասիրությանը, հսկայական հավաքածու կազմել, տարբեր թիթեռներ հավաքել, որոնցից 7-ը մկրտվել են նրա անունով, 1934-1937 թթ. գերմաներեն լեզվով Schneeur ստորագրությամբ հրատարակել է վեց գիտական հոդված, իսկ այնուհետև անցել ֆրանսերենի և 14 հոդված տպագրել Chnéour տառադարձությամբ՝ գլխավորապես Թունիսի գիտական հանդեսներում 1942-1963 թվականներին [51]: Թունիսում եղած ժամանակ մտերիմ է եղել ծովային սպա Վլադիմիր Անտոնի Շումովիչի հետ[52]՝ լինելով նաև նրա գործընկերը:

Որոշ ժամանակ էլ բնակվել է Ֆրանսիայում՝ Լիոնում իբրև ուսուցիչ, սակայն ի վերջո 1959 թ.արտագաղթել է ԱՄՆ, հանգրվանել Սան-Ֆրանցիսկոյում: 1942 թվականից եղել է Ֆրանսիայի Միջատաբանական ընկերության անդամ (Société

entomologique), և 1964 թվականից՝ Ամերիկայի Թեփուկաթևավորների ընկերության անդամ: 1956 թ. հունիսի 2-ին 72 տարեկանում տարագրվել է ԱՄՆ, հանգրվանել Նյու-Յորքում, այդ ընթացքում իր հետ Թունիսից բերած հավաքածուն նվիրել է Նյու-Յորքի Բնական Պատմության ամերիկյան թանգարանին և Կալիֆոռնիայի Գիտությունների ակադեմիային[53], և Նյու-Յորքի Բնական գիտությունների պատմության թանգարանին նվիրաբերել է 803 օրինակ: 1961 թ. ֆրանսերեն լեզվով հրապարակել է Թունիսի թիթեռների մասին իր աշխատությունների ռեզյումեն՝ «Լեպիդոպտերոլոգի 26-ամյա աշխատանքը Թունիսում» (1930-ից 1956 թթ.) վերնագրով: Արդյունքում՝ Ալ. Շնեուրի կողմից հրատարակվել է 21 գիտական աշխատանք ֆրանսերեն և գերմաներեն: Ըստ Ս. Ա. Մոզգովոյայի՝ ներկայումս գնդապետ Ա. Կ. Շնեուրի թիթեռների հավաքածուն գտնվում է Կալիֆոռնիայի Գիտությունների ակադեմիայում, իսկ հեղինակն էլ հանդիսացել է Ֆրանսիական և Ամերիկյան Միջատաբանական ընկերությունների անդամ: Շնեուրի մասին, ըստ Մոզգովոյայի կողմից բերված փաստերի, հետաքրքիր դիտարկում է ունեցել նաև Կ. Վ. Մախրովը, ըստ որի՝ Ա. Կ. Շնեուրի հետ 1942 թ. ամուսնացել է այրիացած Ելիզավետա Կոնստանտինովնա-Տիռնշտեյնը. Մախրովի հավաստմամբ՝ «Ա. Կ. Շնեուրը հավաքում էր թիթեռներ… հավաքածուն գբաղեցնում էր ողջ սենյակը …»: Ստացվում էր, որ ոչ պատահականորեն Ա. Շնեուրը հենց դրանով դասվեց երեք նշանավոր տարագիրների շարքում, որոնց անունները 20-րդ դարում մտան գիտական տարեգրությունների մեջ որպես մեծ ներդրում Հյուսիսային Աֆրիկայի և Սահարա անապատի ֆլորայի և ֆաունայի հետազոտման բնագավառում, որոնց թվում էին Ալեքսանդր Կոնստանտինի Շնեուրը, նրա հանմահեղինակ Նիկոլայ Միխայիլի Շպակովսկին և Շնեուրի ընկեր ու գործընկեր Վլադիմիր Անտոնի Շումովսկին: Ալ. Շնեուրը Թունիսի ֆաունայի ակտիվ հետազոտողներից էր և 1954 թ. նա Ն. Շպակովսկի հետ միասին, որպես համահեղինակներ, հրապարակում են «Թունիսի օձերը» աշխատանքը[54]: Այդ ընթացքում մտել է Մեծ պատերազմի ռուս վետերանների ընկերության մեջ որպես դրա իսկական անդամ, հրապարակել է հուշեր «Вестник» ամսագրում, 1963-1968 թթ. հրատարակել է «Հայերը. Թրքական պատերազմ» հանրահայտ գիրքը:

Ալեքսանդր Շնեուրը, այդ մեղմ ու նրբազգաց մարդը, սակայն Սան Ֆրանցիսկոյի իր տան շեմին անգթորեն ծեծվել է փողոցային խուլիգանների կողմից, այդ պատճառով իր կյանքի վերջին երեք տարիները անցկացրել է ծերանոց-հիվանդանոցում: Այնտեղ էլ Սարդարապատի հերոսամարտի մասնակից ու ականատես, հերոս գնդապետ Ալ. Շնեուրը երկարատև հիվանդությունից հետո իր մահկանացուն է կնքում 93 տարեկանում: Հայտնի հետախույզ, գնդապետ Ա. Կ. Շնեուրը վախճանվել է 1977 թ. սեպտեմբերի 16-ին, և հողին հանձնվել ԱՄՆ-ի Սան-Ֆրանցիսկո քաղաքի Քոլմե արվարձանի Սերբական գերեզմանոցում[55]: Այնտեղ է թաղված նաև նրա կինը՝ Ելիզավետա Կոնստանտինովնան (մինչև ամուսնությունը՝ օրիորդ ժամանակ կրել է Տիռնշտեյն ազգանունը (1897–1971 թթ.)[56]:

Շնեուրի առանձնահատուկ հետաքրքրությունների ոլորտում են գտնվել հայկական օդուժի կազմակերպման և զարգացման հարցերը, որոնցում նա չասիազանց նախանձախնդիր և համառ է եղել: Դեռ 1918 թ. հոկտեմբերի 8-ին Հայկական դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Մ. Սիլիկյանը, հատուկ հրամանագրում անդրադառնալով իրեն վստահված դիվիզիայի Գլխավոր շտաբի օպերատիվ բաժնի պետ, փոխգնդապետ Ալ. Կ. Շնեուրի զեկույցին[57], տեղեկացնում է վերջինիս կողմից հոկտեմբերի 4-ին (N 70) հայկական օդագնաց ջոկատի ստուգման մասին և շնորհակալություն հայտնում: Սիլիկյանին ներկայացված զեկույցում Շնեուրը նշել էր, որ ինքը ստուգել է օդագնաց ջոկատը՝ վկայելով, որ աշխատանքները փայլուն են կատարվել, ամեն ինչ դասդասվել է և խնամքով, կանոնավորապես տեղավորվել: Փաստվում էր,

որ երեք թռչող ապարատները սարքին են և հոկտեմբերի 12-ին պատրաստ կլինեն թռիչքների համար ըստ նշանակման: Հավելվում էր, որ 4-րդ «Վուազենը» կարելի է կարգի բերել, սակայն միայն դրանց մասերը Դիլիջանից տեղափոխելուց հետո. մտահոգություն էր հայտնվում, որ մեխանիկների բացակայության պատճառով աշխատանքները իրենք՝ սպաներն են կատարում, որպես հասարակ փականագործներ և հյուսներ, սակայն միանգամայն արհեստավարժ ձևով: Միաժամա[օդանավարանների (անգարների) կառուցումը՝ այն համոզմամբ, որ դրանք չիրագործելու դեպքում և թերանալու պարագայում այդ սարքերը ուժեղ քամուց կարող են ջարդուփշուր լինել: Շնեուրը նաև տեղեկացրել էր, որ բանվորական ուժի սուր կարիք է զգացվում: Ավիաջոկատի դիտարկումից Ալ. Շնեուրը գոհ էր մնացել, սակայն առաջարկել էր ավիաջոկատին աջակցելու նպատակով ջոկատ գործուղել 10 զինվորի, սակայն ո՛չ դասալիքների[58]:

1919 թ. հոկտեմբերի 10-ին (N 0012) գնդապետ Ալ. Շնեուրին ուղղված պաշտոնական նամակում Սևծովյան նավատորմի ծովակալության գծով նախկին պորուչիկ Հովհան Խան-Կոտուրսկին (նշանավոր Խան-Ղոթուրին կամ Արտեմի Նիկիտայի Հովհաննեսովը) հայտնում էր, որ օդային և լճային նավատորմի ստեղծման գաղափարը ծագել է դեռ հանրապետության ձևավորման առաջին օրերից: Խան-Կոտուրսկին նշելով, որ թե՛ Շնեուրը և թե՛ անձամբ ինքը ուժերի ներածին չափով նպաստել են գործի ծեռնարկմանը, իրենց վիճակվել է դիմանալ շատ խեթ հայացքների և անվստահության, որ առաջին նախագծերը չոր վերաբերմունքի են արժանացել, և սակայն իրենց երազանքը կյանքում միս ու արյուն ստացավ, իրագործելի դարձավ, ճիշտ է՝ օդային և առագաստանավային, ոչ մեծ, սակայն այնուհանդերձ ժողովրդի ապագա հզորության և երջանկության խորհրդանիշ հանդիսացող նավատորմիղի գաղափարը իրողություն դարձավ: Շնեուրը համոզված էր, որ երկուսով, և առավել ևս ինքը, որն իր աչքերով տեսել է Սևծովյան հարազատ նավատորմի կործանումը, և այժմ մտահոգել է երիտասարդ հանրապետության նավատորմի ծնունդը, որն անտարբեր չէ «Անդրեևյան Դրոշի»[59] նկատմամբ, կանգ չի առնի կես ճանապարհին և կշարունակի սկսած պատվաբեր գործը: Գնդապետ Ալ. Շնեուրը դժգոհում և զարմանում էր, որ դեռ հնչում են ձայներ, որոնք պնդում են սկսված գործի և ծեռնարկումի պատրանքայնության մասին, սակայն, այդուհանդերձ, ինքը և Խան-Կոտուրսկին կոչ են անում Ռուսաստանի ռազմական գերատեսչության նմանօրինակ կառույցները ստեղծել Հայաստանում: Խան-Կոտուրսկին համոզմունք էր հայտնում, որ ժողովուրդն իրենց կաջակցի և օգնության կգա այդ գաղափարի իրագործման գործում: Նա նաև համոզված էր, որ ողջ ուժերը և համոզվածությունը կներդրվեն, որպեսզի «Նորին գերազանցության» Զինվորական նախարարը, զորքերի հրամանատար սպարապետ գեներալ-լեյտենանտ Նազարբեկյանը և գեներալ-մայոր Հախվերդյանը Հայաստանում օդային և լճային նավատորմի ստեղծման համար հանգանակվող զորաբերությունների և նվիրատվությունների հավաքման գործը տնորինող «Հատուկ կոմիտեի» գործունեությունը իրենց հովանավորության տակ կվերցնեն, որը իրագործելու համար նրանք կհասնեն Նախարարների խորհրդի թույլտվությանը և ամենայն աջակցությանը: Խան-Կոտուրսկին և Ալ. Շնեուրը վստահություն էին հայտնում, որ իրենց առջև է օդային և լճային նավատորմի կազմակերպման ընդհանուր և պետականորեն կարևոր գործը, որին վիճակված է վճռական դեր խաղալ պետական պաշտպանության գործում և ազգային մշակույթի առաջընթացում[60]:

1919 թ. հոկտեմբերի 14-ին (N 54) ՀՀ Զինվորական նախարար, Նորին գերազանցության գեներալ Հովհ. Հախվերդյանին ուղղված պաշտոնագրում Գլխավոր շտաբի պետ, փոխգնդապետ Ալ. Շնեուրը կրկին անդրադառնում էր օդային և ծովային նավատորմի ստեղծման գաղափարին՝ գտնելով, որ այն պահանջում է ժողովրդական միջոցների ներգրավվում: Շնեուրը համոզված էր այդ նոր նախաձեռնության հաջողության

մեջ, ըստ այդմ՝ թախանձագին խնդրելով ծանոթանալ Ծովակալության գծով պորուչիկ Հովհան Խան-Կոտուրսկու պաշտոնագրին, իր կողմից նաև ավելացնելով գործի օգտին իր միջնորդությունը, որ պահանջում է այդ գործում ներգրավվել անձանց, որոնց համար թանկ է հայ ժողովրդի անունը և պատիվը՝ ակնկալվում է Զինվորական նախարարի շահագրգիռ մասնակցությունը, գեներալ Թ. Նազարբեկյանի և անձամբ Հ. Հախվերդյանի միջնորդական առաքելությունը՝ հանդես գալ կառավարությանը այդ գործում ներգրավման համազգային գործի օգտին[61]: Համաձայն կատարված մակագրության՝ գեներալ-մայոր ՀՀ երկրորդ Զինվորական նախարար գեներալ Ք. Արարատյանը հոկտեմբերի 16-ին իր համաձայնությունն էր տվել ներկայացնելու սույն խնդրի մասին ողջ գրագրությունը և հատուկ զեկույցը ՀՀ Նախարարների խորհրդի քննարկմանը՝ ըստ այդմ ձեռնարկը միանգամայն անհրաժեշտ և օգտակար համարելով [62]:

Ալեքսանդր Շնեուրը Հայաստանի Առաջին Հանրապետության բանակի, նրա հատուկ ծառայությունների այն բացառիկ սպաներից էր, որն անուրանալի ներդրում ունի նրա կայացման համար մղված համառ և դժվարին պայքարի տարեգրությունում: Շնեուրը բազմակողմանի գործունեություն էր ծավալում, նրա կարիքը զգացվում էր բոլոր բնագավառներում: Ալ. Շնեուրը մշտապես շարժման մեջ էր, նրան կարելի էր տեսնել Հայաստանի բոլոր շրջաններում՝ որոշակի նպատակներով և տարբեր առումներով՝ մասնակցելով նաև ՀՀ զանազան զորամասերում իշխող իրավիճակի ստուգմանը, տարաբնույթ բացթողումների և չարաշահումների բացահայտմանը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Բախչինյան Ա., Մաթէոսեան Վ.,** Ալեքսանդր Շնէուր՝ Սարդարապատի մասնակից ու վկայ, «Հայաստանի Հանրապետություն–100». միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան: ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2018, էջ 94-105:
2. Տե՛ս **Հայաստանի Ազգային արխիվ** [այնուհետև՝ **ՀԱԱ**], ֆ. 91, g. 3, գ. 3594, թ. 2 - 20, ֆ. 200, g. 1, գ. 180, թ. 14, ֆ. 368, g. 1, գ. 4, թ. 4 և այլն:
3. **Դեվոյանց Տիգրան Թադևոսի** (<20.08.1887>, Երևան - 02. 09. 1965, Բելգիա) - սովորել է Տոմսկի համալսարանի լեռնային-ճարտարագիտական ֆակուլտետում, մանկավարժ: Հայտնի է **Դևո, Тигр** և այլ ծածկանուններով: Տե՛ս **Հովակիմյան Բ. Մ.**, Հայոց ծածկանունների բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 2005, էջ 596. – Օգտագործ. Աղբյուրները՝ **«Հորիզոն»** (Թիֆլիս), 1914, № 230, 233, **«Армянский вестник»** (Москва), 1916, № 33, стр. 24, **«Кавказское слово»** (Тифлис), 1914, № 28-30, 34-36, 1918, № 117: Հ.Գ.: Ծննդյան տարեթիվը ճշտվել է՝ նախկինում մեր կողմից շրջանառված 1890-ի փոխարեն – տե՛ս **Վիրաբյան Վ. Հ.,** Տիգրան Դեվոյանցի հետախուզական գործունեությունը /Վ. Հ. Վիրաբյան, -Երևան, ԵՊՀ հրատ., 2018, էջ 16: Հենց Դեվոյանցի իսկ վկայությամբ, Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից պրապորչիկ էր և հանդիսանում էր ռուսական Կովկասյան բանակի շտաբին առընթեր հետախուզության վարիչը, որն այդ օրերին իր հիմնական գործունեությանը զուգահեռ զբաղվել էր նաև հայկական ջարդերի մասին արժանահիշատակ փաստերի և նյութերի հավաքչությամբ. տե՛ս **Тигр. Дево**, Материалы по истории армянской жизни 1915-1916 гг. Протоколь. Допрось свидетеля, «Армянский Вестник». Еженедельний журнал, 1917 г., № 41-42:
4. Տե՛ս **Դէոյեանց Տիգրան**, Հետախոյզի մը յուշերը (Պատասխան իմ քննադատներուն), «ՎԷՄ» (Փարիզ), 1938, Յունուար-Մայիս, թիւ 2, էջ 49:

5. Տե՛ս **Ավետիսյան Հ.,** Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 223:
6. **Ալեքսանդր Կոնստանտինի Շնեուր** (20.08.1884 թ.-16.09.1977 թ.):
7. Տե՛ս մանրամասն այդ մասին **Шергалин Ев. Эд.,** Александр Константинович Шнеур (1884-1977) – Военный, энтомолог и герпетолог: «Астраханский Вестник Экологического Образования», № 1 (35), 2016, с. 127-128:
8. Տե՛ս **Kayaloff Jacques**, The Battle of Sardarabad, The Hague and Paris, 1973, p. 36: Նյու-Յորքում ապրած Կայալովը թղթակցություն է ունեցել Ալ. Շնեուրի հետ:
9. Տե՛ս մանրամասն այդ մասին Шергалин Евг. Эд., Александр Константинович Шнеур (1884-1977)–Военный, энтомолог и герпетолог: «Астраханский Вестник Экологического Образования», № 1 (35), 2016, с. 127-128:
10. Տե՛ս **Սարդարապատի հերոսամարտը**, գրեց Գլխաւոր Սպայակոյտի գնդապետ **Ալեքսանդր Կ. Շնէուր,** Մասնակցողի Յուշեր. Թարգմանեց Ա. Ամուրեան /Անդրե Տեր-Ամուրեան/, Ասպարեզ տպարան, հրատարակութիւն Հ.Կ.Դ.Կեդր. Կոմի-տէի, 1967, Ֆրէզնո, էջ 33:
11. Տե՛ս **Շնէուր Ալեքսանդր Կ**., նշվ. աշխ., էջ 20:
12. Տե՛ս **Սարդարապատի հերոսամարտը**, գրեց Գլխաւոր Սպայակոյտի գնդապետ Ալեքսանդր Կ. Շնէուր, Մասնակցողի Յուշեր, էջ 7:
13. Իվան [Հովհաննես] Դավիդի Վեքիլյան (Վեքիլով Իվան Դավիդի[6 դեկտեմբե-րի, 1894 թ. -16 հունիսի 1953 թ.] -տե՛ս Маршалы, генералы и адмиралы армянского происхождения, Биографический справочник, Изд. Второе, до-пол., составил Армен Меружанян, Санкт-Петербург, Изд-во «Роза ветров», 2013, с. 99:
14. Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 204, g. 1, գ. 42, թ. 19 -20, 34-35:
15. Նույն տեղում, գ. 40, թ. 55:
16. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 204, g. 1, գ. 129, թ. 6 -7:
17. Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 204, g. 1, գ. 104, թ. 53, **Ավետիսյան Հ.,** Հայկական հարցը 1918 թվականին, էջ 223:
18. Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 204, g. 1, գ. 132, թ. 68:
19. Նույն տեղում, գ. 131, թ. 24:
20. Տե՛ս Շնէուր Ալ., նշվ. աշխ., էջ 43:
21. **Հայաստանի Հանրապետության արխիվ** (Բոստոն), թիվ 9/9, պահ. 12, դ. 3:
22. Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 204, g. 1, գ. 132, թ. 131:
23. Նույն տեղում, գ. 132, թ. 174:
24. Նույն տեղում, գ. 131, թ. 27, 43, 46, 55-56, 61, 67:
25. Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 204, g. 1, գ. 40, թ. 43-44, 46, 59, **Կարապետյան Մ.,** Հայաստանի Հանրապետության բանակը (1918 -1920), Երևան, 1999, էջ 30-31:
26. Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 200, g. 1, գ. 155, թ. 24:
27. Տե՛ս նույն տեղում:
28. Տե՛ս նույն տեղում:
29. Արարատյան (Արարատյան Քրիստափոր Գերասիմի -18 հունիսի, 1876 թ. - 10 դեկտեմբերի, 1937 թ.: Արարատյան (Արարատով) Խաչատուր Գերասիմի [18.06.1876 թ.- 10.12.1937 թ.] – Գեներալ-մայոր: Ակտիվորեն մասնակցել է 1918 թ. մայիսյան Բաշ-Ապարանի և Սարդարապատի հերոսական ճակատա-մարտերին, այնուհետև հոկտեմբերին գլխավորել է Թուրքիայի և Հայաստանի Հանրապետության միջև սահմանների հաստատման հանձնաժողովը, 1919 թ. մարտից մինչև 1920 թ. սկիզբը եղել է ՀՀ Զինվորական նախարարը: Պաշտո-

նից հեռացվել է ՀՅԴ կուսակցության անդամ դառնալուց հրաժարվելու համար: 1920 թ. աշնանը մասնակցել է աղետաբեր թուրք-հայկական պատերազմին և դավաճանության հետևանքով գերի ընկել: Հետաքրքիր է նաև նշել, որ թուրքական բանակի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշայի կողմից Ք. Արարատյանին առաջարկ է արվել՝ թուրքական ռազմական ակադեմիայում դասավանդելու հրետանային պատրաստության դասընթաց, սակայն վճռաբար մերժվել է վերջինիս կողմից: Վերջինս թուրքական գերությունից ազատվել է Խորհրդային Հայաստանի հանրահայտ ղեկավար և ականավոր պետական գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանի համառ ջանքերի շնորհիվ, և նրա իսկ անմիջական առաջարկով գեներալ-մայոր Քրիստափոր Արարատյանը 1923 թ. զբաղեցրել Հայկական հրածգային դիվիզիայի հրամանատարի տեղակալի պաշտոնը: Զորացրվելուց հետո գեներալ-մայոր Քրիստափոր (Խաչատուր) Արարատյանը եղել է Երևանի պետական համալսարանի և գյուղատնտեսական ինստիտուտի ռազմագիտության ամբիոնների վարիչ – տե՛ս **Հայազն Տիգրան [Պետրոսյան Տիգրան], Գարեգին Ղազարյան**, 1000 հայազգի գեներալներ, ծովակալներ: Կենսագրական հանրագիտարան, Երևան, Հեղին. հրատ., 2009, էջ 120-121: Маршалы, генералы и адмиралы армянского происхождения, стр. 46 - 47:

30. Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 200, ց. 1, գ. 155, թ. 23:
31. Նույն տեղում, ֆ. 204, ց. 1, գ. 132, թ. 75, գ. 129, թ. 6:
32. Նույն տեղում, գ. 132, թ. 77:
33. Նույն տեղում:
34. Նույն տեղում:
35. **Հարությունյան Ա.,** ՀՅ Դաշնակցության 1918-1920 թթ. Պատմության վավերագրերը, «ՎԷՄ», համահայկական հանդես, Զ (ԺԲ) տարի, 2014, թիվ 4 (48), հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 249:
36. Տե՛ս նույն տեղում:
37. Տե՛ս նույն տեղում:
38. Տե՛ս նույն տեղում
39. Տե՛ս **Ավետիսյան Հ.,** Հայկական հարցը 1918 թվականին, թ. 185:
40. Տե՛ս **Ганин А. В.,** Корпус офицеров Генерального штаба в годы гражданской войны, 1917–1922 гг., Справочные материалы, М., «Русский путь», 2009, стр. 131, 381, 495, 599, 738:
41. Տե՛ս **Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.** (քաղաքական պատմություն), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 399:
42. Տե՛ս **Kayaloff J.,** The Battle of Sardarabad, p. 37.
43. **Русская военная эмиграция 20-х-40-х годов**. Докумены и материалы Том I. Так начиналось изгнанье 1920-1922 гг. Книта первая: Исход, Москва, Издательство «Гея», 1998 стр.112:
44. Տե՛ս **Шнеур_Александр_Константинович**: https://ria1914.info/index.php: 11.02.2020 թ.:
45. Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 290, ց. 1, գ. 9, թ. 28:
46. Տե՛ս **Квинитадзе Г. И.,** Воспоминания в годы независимости Грузии. 1917-1921, YMCA-PRESS 11, rue de la Montagne-Ste-Geneviève 75005 Paris 1985, с. 8:

47. Տե՛ս մանրամասն այդ մասին **Шергалин Евг Эд.,** Александр Константинович Шнеур (1884-1977) –Военный, энтомолог и герпетолог: Астраханский Вестник Экологического Образования № 1 (35) 2016. с. 127-128:
48. Տե՛ս **Հայաստանի Հանրապետության արխիվ** (Բոստոն), թիվ 17/17, պահ. 12, դ. 3, թ. 4:
49. Տե՛ս **Шнеур_Александр_Константинович**: https://ria1914.info/index.php: 11.02.2020 թ.:
50. Տե՛ս **Государственный архив Российской Федерации** (ГАРФ), Раздел 6 – Персональная переписка РЗИА (респонденты), л. 390: http://statearchive.ru/assets /files / trzia/06.pdf./26.02.2021 թ.:
51. Տե՛ս այդ մասին **Шергалин Евг. Эд.,** Александр Константинович Шнеур (1884-1977– Военный, энтомолог и герпетолог: «Астраханский Вестник Экологического Образования» № 1 (35) 2016. стр. 127-134.
52. Ալ. Շնեուրի ընկեր և գործընկեր Վլադիմիր Անտոնովիչ Շումովիչը (1897–1960)ռուս տաղանդավոր հետազոտողներից էր, ում հետաքրքրությունների շրջանակները նրա մասնագիտությունից՝ սպա-ռուսական նավատորմի ռադիոհեռագրողի դուրս էին գտնվում. նա ակտիվ հետաքրքրություն էր դրսևորել թռչնաբանության և օձագիտության ոլորտում, ինչպես նաև Սահարայի հետ սահմանակցող Թունիսի հարավային մասի ֆլորայի և ֆաունայի հետազոտության մեջ: Հավաքված բազմաթիվ գտածոների հիման վրա նշանավոր ռուս բնագետ Վ. Ա. Շումովիչը Թունիսի հարավում բացում է Բնական գիտությունների թանգարան. Տե՛ս **Судьба Русской эскадры:** корабли и люди. Материалы Международной историко-просветительской конференции «Судьба Русской эскадры: корабли и люди» (Санкт-Петербург, 21–22 ноября 2019 г.). / Науч. ред. и сост. С. А. Мозговой, М.: Институт Наследия, 2020, стр. 135:
53. Տե՛ս **Шергалин Е. Эд.,** նշվ. աշխ., էջ 127:
54. **Мозговой С. А.,** Морская парусная экспедиция в тунис по следам русской эскадры: В сб.: Судьба Русской эскадры: корабли и люди. Материалы Международной историко-просветительской конференции «Судьба Русской эскадры: корабли и люди» (Санкт-Петербург, 21–22 ноября 2019 г.). / Науч. ред. и сост. С. А. Мозговой, М. : Институт Наследия, 2020, стр. 133-134:
55. Տե՛ս **Русские в Северной Америке**. Е. А. Александров. Хэмден (США)-Сан-Франциско (США)-Санкт-Петербург (Россия), 2005, стр. 576, Архив Общества русских ветеранов Великой войны в Сан-Франциско. Генерального штаба полковник Александр Константинович Шнеур, 1977, Сентябрь. Альбом VI. 30-В. Некролог // «Часовой» (Брюссель). 1977, Декабрь, № 609. стр. 19:
56. Տե՛ս Шнеур_Александр_Константинович: https://ria1914.info/index.php: 11.02.2020 թ.:
57. Ալեքսանդր Կոնստանտինի Շնեուրը 1915 թ. երկամսյա դասընթաց է անցել Կիևի օդանավորդության դպրոցում՝ ստանալով օդաչուի վկայական, իսկ 1916-1917-ին ուսանել է Ս. Պետերբուրգի Նիկոլայան սպայակույտի ակադեմիայում: Տե՛ս այդ մասին **Шергалин Евг. Эд.,** Александр Константинович Шнеур (1884-1977) – Военный, энтомолог и герпетолог: «Астраханский Вестник Экологического Образования», 2016, № 1 (35), стр. 127-128: Տե՛ս **Kayaloff Jacques**, The Battle of Sardarabad, The Hague and Paris, 1973, p. 36: Նյու-Յոր-

քում ապրած տարիներին Կայալովը թղթակցություն է ունեցել Ալ. Շնեուրի հետ:

58. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 204, g. 1, գ. 42, թ. 95:
59. «Անդրեևյան Դրոշ» խաչը Ռուսաստանյան կայսրության Ռազմածովային ուժերի դրոշն էր 1965-1917 թթ.: Տե՛ս Басов А. Н., История военно-морских флагов, М., АСТ, СПб, «Полигон», стр. 88-310:
60. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, g. 1, գ. 29ա, թ. 218:
61. Տե՛ս նույն տեղում, թ. 216:
62. Տե՛ս նույն տեղում:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ալ. Շնեուրը հայկական հետախուզության ակունքներում (1918-1920 թթ.)

Վանիկ Վիրաբյան

Սարդարապատի ճակատամարտի մասնակից և հերոս, գնդապետ Ալեքսանդր Կոնստանտին Շնեուրը Հայաստանի Առաջին հանրապետության հետախուզական դպրոցի աչքի ընկնող դեմքերից է և նրա հիմնադիրներից, ինչպես նաև ՀՀ Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի առաջին պետն էր: Գնդապետ Ալ. Շնեուրը անուրանալի վաստակ ունի Առաջին հանրապետության կայացման գործում: Նա նաև 1919 թ. հայտնի Զոդ-Բասարգեչարյան /Վարդենիսյան/ գործողության հետախուզական նախապատրաստման կազմակերպիչն է, ում շնորհիվ հայկական զորքը գեներալ Դանիել Բեկ-Փիրումյանի գլխավորությամբ ճնշեց մահմեդական հակապետական խռովությունը Հայաստանի Հանրապետության դեմ՝ ապահովելով նրա անվտանգությունը ՀՀ այդ վարչական մասում: Շնեուրը, լինելով նաև օդաչու, իր որոշակի դերակատարումն ունեցավ հայկական օդուժի և նավատորմի առաջին քայլերում:

РЕЗЮМЕ

Ал. Шнеур в истоках армянской разведки

Ваник Вирабян

Ключевые слова: полковник Ал. Шнеур, разведчик, разведывательная служба, Сардарапат, героическое сражение, Зод-Басаргечар /Варденисский/, генерал Даниел Бек-Пирумян, армянские войска, Республика Армения, государственная безопасность, исторический факт, капитан Тигран Девоянц, поручик О. Хан-Котурский, капитан Ваагн Мурадянц, воздушный и озерный флот.

Участник и герой Сардарапатской битвы, полковник Александр Константинович Шнеур является одним из видных деятелей и основателей разведывательной школы Первой Республики Армения, а также он был первым начальником Разведывательного и Контрразведывательного отделения Главного штаба Военного Министерства РА.

Полковник Ал. Шнеур имеет неоценимый вклад в деле состояния Первой Республики. Он также является автором разведывательной подготовки известного Зод-Басаргечарского военной акции 1919 г., в результате которого армянская армия во главе генерала Даниела Бек-Пирумяна подавила магометанский антиправительственный мятеж против Республики Армения, обеспечивая ее государственную безопасность на этом административном участке РА. А. Шнеур, будучи летчиком, также сыграл свою определенную роль в первых шагах становления армянских воздушных сил и флота.

SUMMARY
Al. Shneur in the Origins of Armenian Intelligence Service
Vanik Virabyan

Keywords: colonel Al. Sneur, intelligence officer, Intelligence service, Sardarapat, Heroic battle, Zod-Basargechar, general Daniel Bek-Pirumyan, Asmenian Armed forces, State security, Historical fact, captain Tigran Devoyants, lieutenant H. Khan-Koturski, captain Vaagn Muradyanc, air and lake fleet.

Participant and Hero of the Sardarapat battle, Colonel Aleksandr Shneur is one of prominent figures and founders of Intelligence School of the First Republic of Armenia, also the first Head of Intelligence and Counter intelligence Section of General Headquarters of Military Ministry of RA.

Colonel Al. Shneur has made an invaluable contribution to the state of the First Republic. He is also the author of the intelligence preparation of the famous Zod-Basargechar military action of 1919, as a result of which the Armenian army led by General Daniel Bek-Pirumyan suppressed the Mohammedan anti-government revolt against the Republic of Armenia, ensuring its state security in this administrative area of the RA. A. Shneur, as a pilot, also had a certain role in the first steps of the formation of the Armenian air force and navy.